հրամայեաց 'ի Թագաւորական գանձէ, զոր եգիտ 'ի քաղաքին, տալ զփրկանս ժողովրդոց։ Եւ յետ այնորիկ յանձն արար զբանալիս բերդին, և երաց զդրունս քաղաքին, և եմուտ Սալահատտին փառօք 'ի ներքս յաւուր ուրբաթու։ Այսպէս առաւ Երուսաղէմ 'ի Սալահատտինէ յամի Տեառն 1187, և 'ի Թուին Հայոց 636 եւ Հիճրեթին ٥٨٣․ Հոկտեմբեր 2․ յետ տիրելոյ նմա Լատինաց ամս 88։ Եւ վերբերտին սկսաւ ծածանիլ Մահմետական դրօշն 'ի վերայ պարսպաց նորին։ Այլազգիք գտին 'ի քաղաքի անդ զարս և զկանայս և զմանկունս աւելի քան զ100,000 ոգիս, եւ Սուլթանն ետ փակել զդրունս քաղաքին, և կացոյց զոստիկանս և դպիրս ժողովել զսահմանեալ հարկն․ սակայն բազումք կախեալ պարանաւ ընդ պարիսպն փախեան, ոմանք զողեցան 'ի տունս, և այլք զերծան 'ի ձեռն միջնորդաց։ Արձակեաց Սուլթանն ընչիւք առանց փրկանս զոմն երեւելի Բամբիշ, զկին և զորդի Թագաւորին Գուիտոնի, և զոմն իշխանուհի դուստր Փիլիպպոսի, եւ մայր Հանկրի, և զայլս որք ընդ նոսա էին։

Գտան 'ի նմին ժամանակի 'ի քաղաքին (*) 500 ուխտաւորք յազգէն Հայոց, այլ չառին ինչ 'ի նոցանէ․ մի ոմն յիշխանաց Սուլթանին խնդրէր նաեւ զ1000 ոգիս 'ի Հայոց, բայց յայտ արարին թէ նոքա են կրօնաւորք բնակեալք յԵրուսաղէմ և 'ի շրջակայս նորա, զորս եթող Սուլթանն։ Վաճառեցին Լատինք զինչս և զստացուածս իւրեանց դիւրագին, և զայլս թողին 'ի բաց, և մեկնեցան 'ի քաղաքէն․ ժողովեալ եբարձ Պատրիարգն զամենայն զարդս և զծանրագին սպասս եկեղեցեաց և տաճարին Ս․ Յարութեան և 13,000 կրօնակիցս իւր իբրեւ հոգեւոր որդիս, զորոց ազատութիւնն պատուական գիտէր քան անձին իւրոյ։ Ամատէտտի դպրապետն դժկամակ եղեւ ընդ այս և մատուցեալ առ Սուլթանն ասէր․ թէ՝ չէ օրէն քրիստոնէից զայնչափ հարստութիւն հանել 'ի քաղաքէն, սակայն Սուլթանն արգել զնա 'ի խորհրդոյն, մի բռնասցուք ասէ 'ի

(*) Արաբացի պատմիչն սխալի ասա, զի 500 թիւն էին կրօնաւորք Հայոց բնակեալ 'ի վանօրայս․ իսկ հազար անձինք՝ էին 1000 տունք բնակիչք Երուսաղէմի․ կային նաեւ Հայք 'ի Բեթղեհէմ, 'ի Քերեք և յայլ ուր, որ 'ի նմին ժամանակի եղեն ցիր և ցան։